ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունվարի 2024 թվականի N: 20 - Ա ք.Գյումրի

ԱՐՄԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ մասի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 85-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 23-ի N 3 որոշումը և Արմեն Իսահակյանի 2024 թվականի հունվարի 23-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Արմեն Իսահակյանին 2024 թվականի հունվարի 24-ից նշանակել «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում՝

կնքելով աշխատանքային պայմանագիր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:

2. 2024 թվականի հունվարի 24-ից դադարեցնել Արմեն Իսահակյանի՝ «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի լիազորությունները՝ լուծելով նրա հետ 2023 թվականի նոյեմբերի 14-ին կնքված N 7/ժպ աշխատանքային պայմանագիրը:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է